

ԱՆՏՈՒԱՆ ԿԱՐԻԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՅՈՒ
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ

Ֆրանսիացի հայագետ-արևելագետ Անտուան Կարիերը (1838—1902) նամակագրություն է տեսնեցել Մխիթարյան միաբանության և Հազարյան ճեմարանի աշխի ընկնող հայագետների, ինչպես և անվանի բանասեր նորայր Բյուզանդացու (1845—1915) հետ: Կարիերի և Բյուզանդացու նամակագրությունը նվիրված է հայ մատենագրության մի շարք կարևոր խնդիրների քննարկմանը: Իհն նամակներում արծարծված շատ հարցեր հետազայում լուծվել են, աշնումենայնիվ, նրանք կարևոր են հայագիտության պատմության տարբեր պրոբլեմների լուսաբանման համար: Նամակների ֆրանսերեն բնագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (ֆ. 70, թղթ. N 235, վավ. 201—205, թղթ. N 235բ, վավ. 246—250):

Ա. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1.

16 օգոստոս 1892

Պատուհ

Մի կարճ հոգոված, որ ուղարկել էի Վիեննայի հանդեսին¹ և որը տպագրվեց այդ ամսաթերթի վերջին համարում², առիթ հանդիսացավ ձեռք բերելու Ձեր հասցեն և այսպիսով հնարավորություն եղավ Ձեզ դրել: Հ. Տաշյանը³ ինձ ասում է, որ այդ հոգովածը Ձեզ հետաքրքրող բնույթի է, որովհետև այն գալիս է նեցուկ լինելու Մովսես Խորենացու պատմության ժամանակի վերաբերյալ Ձեր կողմից արդեն հայտնած կարծիքին: Իրոք, ես ցույց եմ տալիս, որ Մովսեսը գրեթե թարգմանել է, օգտվելով մի աղբյուրից, որը չի կարող լինել VI դարի սկզբից առաջ, սակայն կարող է լինել այդ տարեթվից հետո: Ենթադրում եմ, որ Դուք անձամբ ստանում եք Հանդեսը: Եթե այդպես չէ, ապա ես դեռ ունեմ մի քանի օրինակ այն համարից, որտեղ հրատարակված է իմ հոգովածը և կշտապեմ Ձեզ դրանից մի օրինակ ուղարկել:

Ամիսներ ի վեր աշխատում եմ Սեբեոսի իմ թարգմանության վրա, որ հուսով եմ տպագրված վիճակում կլինի եկող ձմեռվա ընթացքում: Դուք գիտեք, որ այդ հեղինակի բնագիրը մեզ է հասել ողբալի վիճակում: Ես կարողացա որոշ ուղղումներ կատարել, բայց մի քանի հատվածներ ինձ համար մնացին բացարձակապես անհասկանալի: Հիմա Հ. Տաշյանն ինձ գրում է, որ Իուր ինքներդ տպագրել եք Սեբեոսի բնագրի ուղղումները: Ծառայություն մատուցած կլինեիք ինձ իմաց տալով, թե որտեղ կկարողանայի դրանք գտնել: Հ. Տաշյանն է. որն ինձ դրա գոյություն մասին հայտնեց և նախապես արդեն գիտեմ, թե դրանք ինչ արժեք կունենան ինձ համար:

Թույլ տվեք այս նամակի հետ միաժամանակ Ձեզ ուղարկել Մովսես Խորենացու վերաբերյալ մի փոքրիկ աշխատություն⁴, տպագրված անցյալ տարի, բայց վաճառքի չհանված: Դուք ինձ կներեք օգտագործված օրինակը ուղարկելու համար, հիմա գտնվում եմ գյուղում և միայն այս ունեմ իմ տրամագրության տակ: Այստեղ մնալու եմ մինչև օգոստոս ամսվա վերջը:

Անշափ գոհ եմ այն առիթից, որն ինձ թույլ տվեց այսպիսով փոխհարաբերության մեջ մտնել հայագետների աշխարհում այնքան ճանաչված գիտնականի հետ, ինչպիսին Դուք եք և խնդրում եմ ընդունել ազնիվ ղեկավարության հավաստիքը:

Ա. Կարիեր

2.

26 օգոստոս 1892

Պարոն

Շտապում եմ շնորհակալությունս հայտնել Ձեր այնքան գորովալի և գիտական նամակի համար, ինչպես նաև Ձեր ուղարկածի համար, որով ցանկացաք ինձ տեղյակ պահել Ձեր հրապարակումների մասին: Ես դրանք անմիջապես աչքի անցկացրի որքան օգուտ քաղելու, նույնքան էլ հետաքրքրության համար և այժմ շատ եմ ափսոսում, որ ավելի շուտ չեմ իմացել նրանց մասին, Ձեր բառաքնությունը ինձ ազատած կլինեի շատ աշխատանքից և փնտրումներից: Ես այն խորապես կուսումնասիրեմ երբ վերադառնամ Փարիզ, բայց թույլ տվեք այժմվանից Ձեր ուղադրությունը հրավիրել մի կետի վրա, որի վերաբերյալ ես այնտեղ բացատրություններ փնտրեցի:

Ես եկա ալն հղրակացության, որ բաղմամբիվ սխալ ընթերցվածքներ որոնք հանդիպում են հայ հեղինակների աշխատություններում, գալիս են համառոտագրությունները վատ վերծանելուց: Օրինակ. Սեբեոս (հրատ. Պատկ.)⁵ էջ 29, տ. 14, «պատերազմեցան»-ի փոխարեն, ինձ թվում է անհրաժեշտ է կարդալ «պարտեցան», որը նախադասությանը տալիս է շատ ավելի հաջող իմաստ: Հիմա, Ձեր աշխատության առաջին գլխում Դուք չեք հայտնում, որ սխալի պատճառը համառոտագրությունների վատ վերծանումն է: Արդյոք սա մի մտածված վրիպո՞ւմ է, կամ էլ ուրիշ տեղ ներկայացրե՞լ եք այս նյութը, որը կարող է լավ ուսումնասիրված լինել միայն մի մարդու կողմից, ինչպիսին Դուք եք, որո՞ւ մեծ քանակությամբ ձեռագրեր է քննության ենթարկել:

Համարձակվում եմ Ձեր ուղադրությունը հրավիրել Սեբեոսի բնագրի իմ ուղղումներից ևս մեկի վրա, որը կարելի կլինեի մտքնել այդ գլխում՝ «ա»-ի և «ու»-ի վերաբերյալ: էջ 27, տ. 18 «և կուլան զբամբիշն և զբանակն» բոլորովին չի ստացվում, մանավանդ երբ նախորդ տողում արդեն կարդում ենք. «առին զբանակն»: «Բանակ»-ի փոխարեն «բանուկ»՝ պահլավերեն բառ է ինչպես «բամբիշ(ն)» և որը նշանակում է dame, ինչպես «բամբիշ» նշանակում է reine, banou գեռ այսօր էլ օգտագործվում է նույն իմաստով՝ անձի առումով: Եվ ես ուրեմն թարգմանում եմ. «ils prirent la reine et les da-

mes du harem royal“: Տե՛ս Փավստոս Բուղանդի զուգահեռ հատվածը, III, 21. «առին... զկանայս Թագավորին և զբամբիշն և զբանսկան... (կարդալ «բանական», «բանուկ»-ի հոգնակին, տե՛ս վրացերեն *banogani, dame*): Փավստոսը հայերեն է թարգմանել այս պարսկերեն բառերը, 5-րդ, 2. «...ըմբռնին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն»: Վերջերս Հ. Տաշյանին հաղորդեցի այս ուղղումները, որը դրանք ընդունում է: Դուք, ինչպես և ես, անշուշտ, կմտածեք, որ «բանսկան» բացատրված ինչպես «բանկայ(!)»-ի հոգնակին, մի *monstrum vocabuli* է: Գուցե հարկավոր լինե՞ր «բանական»-ը թարգմանել *„le harem, les femmes (բառը դժվար ընթեռնելի է) du harem?»*»:

Կարիք չունեմ Ձեզ ասելու, որ ամբողջությամբ համաձիտ եմ հայերեն բնագրերի քննական հրատարակություններ տպագրելու բացարձակ կարևորության վերաբերյալ Ձեր կարծիքին: Բնագրերը այսօր այնպիսի վիճակում են գտնվում, ինչպես լատիներեն և հունարեն բնագրերը XVI դարի սկզբում՝ գուցե և ավելի վատ: 1850 թթ. Նոյմանը² „Journal asiatique“-ում Դավիթ ֆիլիսոփայի վերաբերյալ տպագրված իր աշխատությունում, պահանջում էր հայ հեղինակների քննական հրատարակություններ և ցավում էր այն բնագրերի խաթարվածության համար, որ ունեն իր տրամադրության տակ: Այն հույսերը, որ նա կապում էր վենետիկի հետ, դժբախտաբար չիրականացան: Մեծ հետաքրքրությամբ կարդում էի Ձեր հոդվածը³, որ պատրաստում եք l'Académie du Lincei համար:

Ինչ վերաբերում է Սեբեոսի մի հարմար հրատարակությանը, ապա բոլորովին չեմ կարծում հնարավոր լինի, եթե նոր ձեռագրեր չհայտնաբերվեն. այն ձեռագիրը, որ օգտագործվեց մեր արդի հրատարակությունների համար, իրոք որ շատ վատն է: Ինչպես Դուք, ես այնտեղ հայտնաբերել եմ վրիպակներ և էջերի տեղափոխություններ, մանավանդ առաջին զլուխներում, որոնք, սակայն, ծանրակշիռ կարևորություն ունեն Սասանյանների պատմության համար: Կան նույնիսկ կրկնակի խմբագրված այնպիսի կտորներ, որոնք կարող են անգամ մտածել տալ, թե ինքը՝ հեղինակը, ավարտուն ձև չի տվել այս զլուխների խմբագրությանը և իր աշխատությունը անավարտ է թողել: Այն խառնաշփոթությունը, որ իշխում է այնտեղ, չի կարող ամբողջությամբ վերադրվել գրիչների անճարակությանը: Օրինակ, այն կտորը, որ սկսում է էջ 29, տ. 11, Պատկ. հրատ., պատմում է արդեն ներկայացված փաստերի մասին էջ 26 (տե՛ս նամանավանդ էջ 29, տ. 17, կամ 26, տ. 25): Այն հատվածում, որ վերաբերում է Միհրանի արշավանքին, և որը հասնում է մինչև 29-րդ տողի ներքևը և վերջանում է «գնաց»-ով, հարկավոր է վերացնել Պատկանյանի հրատ. պարբերությունները և բազմաթիվ ուղղումներ անել: Այնուհետև փալիս է խոսքով Անուշիրվանի արշավանքը, արդեն պատմված էջ 26, տ. 30, առանց այն վայրի անվան, որտեղ ծավալվում է մեծ ճակատամարտը: Պատկ.-ի ուղղումները, էջ 30, տ. 1 և 2, քննելու ենթակա են, բայց կտորը քիչ հատվում է 2-րդ տողում «խոսքով» բառից հետո, հարկավոր է այն որոնել էջ 34, տ. 7-ի վրա «և արար...»: Խ. Անուշիրվանի արշավանքի վերաբերյալ հատվածը, ուրեմն, պետք է այսպես վերականգնվի. «Ապա եկն ինքն արքայն Անուշիրվան խոսքով, և արար պատերազմ մի մեծ ի Մեղիտին է յորում պարտեցաւ և գնաց»: Եթե մենք այստեղ չունենք Խ. Անուշիրվանի մեծ պարտու-

թյան վերաբերյալ բոլոր մանրամասնությունները, որոնք գտնվում են 27-րդ էջում, գոնե ունենք տեղեկություն այն վայրի մասին, ուր ծավալվել էր ճակատամարտը (տե՛ս Լը Բո, X, էջ 136)⁴:

Կրկին օգտագործվում է նույն՝ 34-րդ էջի ներքևում, տ. 29 և էջ 70, տ. 19:

Ինձ թվում է, որ այս ձևով վերականգնված կտորը չի կազմում Սերեոսի նախնական բնագրի մասը, սա պետք է լինի կամ մի աղբյուր, որին նա հետևել է, կամ էլ առաջվա խմբագրության մի կտոր, որն ավելի ուշ բավականապես հաջող ձևով միաձուլվել է արգի բնագրին: Լյգ բնագիրը տալն ու վրա է եղել նկատելի վրիպումներով՝ թերթերի տեղափոխության պատճառով: Կարծում եմ, որ ինձ հաջողվեց թուվմա Լկրծրունու համառոտությունների շնորհիվ այն վերականգնել ընդունելի ձևով: Բայց մի կետ ինձ համար մութ է մնացել բնագրի մի վրիպակի պատճառով, դա «ասպետ Պարթև և Պահլավ» (էջ 34, տ. 16) անձնավորությունն է, որ նորից ենք հանդիպում տ. 4-ում (տ. 21 կարդալ «գարձուցեալ» «փախուցեալ»-ի փոխարեն՝ ըստ Լկաթանգեղոսի և Մովսես Խորենացու զուգահեռ հատվածների): Լկրդարև գա մի Լկրշակունի էր ու մի աչքի ընկնող անձնավորություն և այս մանրամասնությունները նոր լույս են սփռում Վնդոյի և Վստամի կողմից օժանդակված Խոսրով Փարվեղի ապստամբությանը Որմիղդի դեմ, մանավանդ որ Վահրամ Չուբինի նույն ժամանակի ապստամբությունը նույնպես մի արշակունյան շարժում էր: Դժբախտաբար, Սերեոսի արգի բնագրի վրիպակները մեղ զրկում են լուսաբանություններից, որոնք, անշուշտ, հակառակ են նախնական բնագրին:

Ինձ մեծ հաճույք կպատճառեր ունենալ Սերեոսի բնագրի մասին այս ձևով դատողություններ անելու վերաբերյալ Ձեր կարծիքը: Ես լիահույս եմ, որ Դուք այնտեղ կտեսնեք ապացույցն այն բանի, որ իմ աշխատությունը բոլորովին չի հանդիսանում բնագրի մի պարզունակ թարգմանություն, ինչպես արել էր Պատկանյանը իր ուսերեն թարգմանության մեջ: Եվ քանի որ Դուք ցանկանում եք ինձ արտոնություն տալ, ապա կհամարձակվեմ Ձեր ուշադրությանը ներկայացնել մի քանի ուրիշ դժվարություններ, երբ որ արձակուրդների վերջում վերստին շարունակեմ իմ քննական աշխատանքը: Բարի եղեք ինձ տեղեկացնել, թե Վենետիկի բառարանի առաջաբանում «Սեղբեստրոսի վարքի» հատվածը արդյոք համադրվե՞լ է Մ. Խորենացու հետ: Ես այն բոլորովին չգիտեի, բայց միտիվարվում եմ իմ անգիտությամբ՝ նկատելով, որ այնպիսի ճանաչված հայագետներ, ինչպիսիք են Հ. Տաշյանը և Հ. Պարոնյանը⁵, որոնք վերջին օրերս ինձ դրեցին, հավանաբար ոչ ավելի գիտեն քան ես: Ես չգիտեի նաև, որ «Սեղբեստրոսի վարքը» թարգմանված է եղել հայերեն: Դուք ինձ ասում եք, որ այն հանդիպում է Սոկրատի «Եկեղեցական Պատմության» հայերեն թարգմանության առաջաբանում: Փարիզում դրանից մի օրինակ ունենք և Ձեզ հավատացնում եմ, որ այն կնայեմ իմ վերադարձի հաջորդ օրվանից: Լնչափ հետաքրքրական կլինի հաստատել, որ Մովսեսը կարողացել է օգտվել արդեն գոյություն ունեցած մի հայերեն թարգմանությունից, ինչպես նա այդ արել է, անտարակույս, իր բաղմամբով ուրիշ աղբյուրների հետ: Բայց մեզ հարկավոր կլինեի, որեմն, բավականին առաջ իջնել VI դարից, որպես Մովսես Խորենացու «Պատմության» ստեղծման ժամանակ: Գիտե՞ք, որ ս. Բարսեղ Լամասիացու «Actes»-ի թարգմանությունը ձիշտ հայերեն է: Երջանիկ եմ, որ Մ. Խ. բնագրի վերաբերյալ իմ ուղղումները համընկնում են Ձերի հետ:

Պարոն, վերջացնելով թույլ տվեք ուրախությունս հայտնել, որ «Acta Silvestri» վերաբերյալ իմ փոքրիկ ծանոթագրությունը ինձ թույլ տվեց հանդիպել մի հայագետի հետ, որի համբավը վաղուց ի վեր գիտեի, նամանավանդ վկայությամբ Ձեր բազմաթիվ հայրենակիցների, որոնք Ձեր նկատմամբ ոչ անտարբեր էին, ոչ էլ թշնամական, այլ լրիվ հակառակը:

Հաճեցեք, Պարոն, ընդունել ազնիվ զգացմունքներիս հավաստիքը:

Ա. Կարիեր

Փարիզի իմ հասցեն. 35, rue de Lille,
բայց մի շարաթ նս մնում եմ գյուղում:

3.

Փարիզ, 10 սեպտեմբեր 1892

Պարոն

Գրքնույլ հասցեագրված օգոստոսի 31-ի Ձեր նամակը այնտեղ է հասել իմ մեկնելուց մի քանի ժամ հետո և ես այն ստացա Փարիզում, որտեղ մնալու եմ մի քանի օր ևս: Առաջիկա շաբաթվա վերջում մեկնելու եմ Էլզաս և այնտեղից՝ Վենետիկ, որտեղ կցանկանայի ավելի մոտիկից տեսնել այնպիսի հնագույն ձեռագրերի նմուշներ, ինչպիսիք են հայկականները: Կարծում եմ արդեն Ձեզ ասել եմ, որ իմ տրամադրության տակ ունեի մի շարք ձեռագրեր՝ յուրաքանչյուր կողմից ծածկված մի 30 հայատառ տողերով, բնագիրը զուտ հունարեն է, այն պարունակում է միայն կարճ նախադասություններ և իրար հետ կապ չունեցող բառեր: Այդ ձեռագիրը, ըստ երևույթին, V կամ VI դարի է: Մինչև օրս այնտեղից դուրս եմ բերել միայն ուղղակի հունարենից փոխառնված գրերը, որոնցից հները այսօր ճանաչված են իբրև ավելի ուշ շրջանի հավելումներ (դ և լ)...: Ներկայումս այն լուսանկարել եմ տալիս, որպեսզի նախքան մի բան հրատարակելը, ներկայացնեմ այն մարդկանց դատին, որոնք կկարողանան ինձ օգնել իրենց մեկնաբանություններով: Առաջին հերթին՝ Ձեր, որն այդքան հաջողությամբ «Մեղիտինէ»ն դուրս բերեց «տեղի մի»-ից: Առաջին հայացքից դրա վրա շատ զարմացած էի, բայց ուղղումը ինձ թվում է միանգամայն ստույգ:

Ինչ վերաբերում է Բիբլարի քրոնիկի «Hermem»-ին, ապա այլևս հարկ չկա կասկածելու: Սեն-Մարտենի՝ ծանոթագրությունը ինձ արդեն զարմացրել էր և գիտուն պատմաբանի շփոթությունը ինձ թվացել էր ավելի քան անհասկանալի: Նա այդ օրը քնած է եղել, երբ շարադրել է այդ ծանոթագրությունը: «Hermem»-ը հավանաբար գրիչի կամ տպագրողի սխալն է «Hermen»-ի փոխարեն: Բացակայում է միայն լ-ի վրալի կետը: Ավելացրեք այդ կետը և Դուք կունենաք սրբագրված ու պարզ մի նախադասություն «gentes... quæ barbaro sermone Hermeni noncu pautur... Միջին դարերի լատիններենում Hermeni, Ermeni, Hermeni բառերը ընդունված են հայերին անվանելու համար, այդպիսի հաղարավոր օրինակներ կարելի է նշել: Ի դեպ, չեմ կասկա-

* Տեքստում գործածված է «պապիրոս» բառը:

ծուծ, որ աբբա Ռիքլարի ժամանակակից հրատարակություններում ուղղումը կատարված չի եղել, բայց դեռ չեմ ճշտել: Որոշել եմ այս ձեռն անպայման կարդալ այդ քրոնիկը՝ Արևելքի պատմության տեսանկյունից, այդ ժամանակաշրջանի պատմիչներին, որոնք Կոստանդնուպոլսի արքունիքի արևմտյան դեսպանների միջոցով ունեցել են բավական նշգրիտ տեղեկություններ: Ես կարող եմ դրանից մի օրինակ ասել, որը Ձեզ կհետաքրքրի: Ամենահին պատմիչը, որը խոսում է Վարդանի 571 թ. ապստամբության մասին և որը մեղավելի ճիշտ մեկնաբանություններ է տալիս, քան թե հայ պատմիչները՝ դամեր ծերուկ Գրեգուար դը Տուրն է², տեղեկացված, և անմիջապես տեղեկացված, Ֆրանսիայի թագավոր Սիգեբերտի (Sigebert—Ա. Վ.) դեսպանների կողմից, քանի որ այն գլուխը (IV, 39), որտեղ նա պատմում է այդ ապստամբության մասին, գրված է եղել 574 թ.: Նրա պատմությունը ավելի մանրամասնորեն հաստատված է ասորական պատմիչ Հովհան Եփեսացու կողմից, որը կայսրության համար նեցուկ պահանջելու հարցով Կոստանդնուպոլիս եկած Հայոց կաթողիկոսի թելադրության տակ էր համարյա գրել: Ուրեմն երկու ձեռագրերը, որոնցից փոխ են առնվել այս պատմությունները, նախորդում են Սեբեոսին, իսկ ես դրանք կհրատարակեմ Սեբեոսի իմ թարգմանության հավելվածում: Հետագա հայ հեղինակները չեն հասկացել այդ ապստամբության բնույթը, որն էականում եղել է կրոնական: Կարծում եմ, որ կարողացել եմ լուսաբանել հայոց պատմության մի շատ հետաքրքրական կետ:

Ես, ճիշտ այնպես, ինչպես Դուք, մաս-մաս էի արել և վերականգնել էի ժամանակագրության մեջ Սեբեոսի առաջին գլուխները՝ չկարողանալով մի տեղ հատկացնել այն հատվածին, որը տալիս է պարսկական այն ղորավարների ցուցակը, որոնք գրավեցին Հայաստանը: Ես դտնում եմ կարևոր վրիպումներ: Դուք էլ եք այն կարծիքին, որ հարկավոր է իրար միացնել էջ 34, տ. 3 (...իւրեանց)-ը և էջ 36, տ. 24 (եւ ղղարս աշխարհին Հայոց...)-ը՝ այդ մասում ներածելով Մուշեղի հիշատակությունը ըստ Արծրունու, էջ 86, տ. 11 (Կոստ. հրատ.)³, առանց այս հրատարակության Մուշեղի հայտնությունը, էջ 37, տ. 9, ավելի քան զարմանալի է:

Ինչպե՞ս եք դտնում «բանակը» «բանուկ»-ի և «բանական»-ը «բանական»-ի իմ ուղղումը: Երեկ ես այն հաղորդեցի Հյուբշմանին, որը ZDMG-ում գրած իր վերջին *Arménia* հոդվածում խոսում է Սեբեոսի (էջ 27, տ. 18) միևնույն նախադասության մասին, որպեսզի հիշատակի պահլավերեն մաշկապերճան... բառի գլուխի մասին, վրան իմաստով թարգմանում է նաև «բանակ»-ը «*lağet*»՝ հարցական նշանով: Հյուբշմանը ինձնից շատ ավելի բանիմաց է Պարսկաստանի հին լեզուները ճանաչելու մեջ և ես շատ եմ ցանկանում իմանալ նրա կարծիքը: Դուք գտա՞ք մի ուղղում «լաստեցին» (էջ 31, տ. 19) և «լաստեցան» (էջ 80, տ. 31, գուցե և այլ տեղում) բառերի համար, որոնք այդ նշված հատվածներում անտարակույս նշանակում են *lağet*, ոչ մի բառարանում չկա այս նշանակությունը կամ մի մոտավոր բան:

Իս Փարիզից կմեկնեմ շաբաթվա վերջում, բայց դուք ինձ միշտ կարող եք գրել «35, rue de Lille». Ձեր նամակները միշտ կուղարկվեն ինձ:

Պարոն, հաճեցե՞ք ընդունել հարգանքիս խորը հավաստիքը:

Ա. Կարիեր

35, rue de Lille

4.

28 սեպտեմբեր 1892

Ժեմառ (էլզաս)

Պատում

Ամսույս 22-ի Ձեր նամակը ինձ գտավ էլզասի մի փոքրիկ գյուղում, որտեղ մի քանի օր անցկացնում եմ բարեկամներին մոտ: Ոչ մի գիրք չունեմ ձեռքիս տակ և դժվարության մեջ եմ փաստորեն, որպեսզի պատասխանեմ Ձեր հարցերից կամ առարկություններից մի քանիսին: Դուք, իհարկե, կբարենաձեք հաշվի առնել իմ դրությունը և կսպասեք մինչև վերադառնամ Փարիզ՝ անդրադառնալու համար Ձեր նամակի մի քանի կետերին:

Ես ունեմ Սիմեոն Ապարանցու պատմական պոեմը¹, բայց նկատեցի, ի զարմանս, որ դեռևս այն չեմ կարդացել: Անշափ շնորհակալություն տեղեկության համար:

Ազգային գրադարանում չգտա Սոկրատի հայերեն թարգմանությունը, կարծում եմ որ այնուամենայնիվ նա այնտեղ է, բայց հայերեն քարտարանի վիճակը, որ անշուշտ գիտեք, Ձեզ պատկերացում կտա իմ պրպտումների դուր լինելու մասին, որին կարող եմ միայն մի քանի բույն նվիրել:

Այս նամակի հետ միաժամանակ Դուք կստանաք հիշյալ ձեռագրի մի կողմի լուսանկարը: Միայն թե Ձեզ խնդրում եմ դրա մասին չխոսել, նույնիսկ Ձեր նամակագրությունում, որովհետև չեմ ցանկանում այն ուղարկել ամեն մի պահանջողի, և բոլորովին չէի ցանկանա դժգոհություններ առաջացնել: Անհամբերությամբ սպասում եմ այս փաստաթղթի վերաբերյալ Ձեր վճռին:

Վաղը շրջագայելու եմ Ստրասբուրգում, որտեղ կտեսնեմ Հյուբշմանին. եթե նա դեռ ունի այն հոդվածի օրինակներից, որի մասին Ձեզ ասել եմ, ապա կխնդրեմ մի հատ, որը կուղարկեմ Ձեզ: Ես հոդվածում դեռ չեմ ներկայացրել Լանգլուայի ելույթը իր թշնամիների դեմ, գրված նրա Collection-ի 2-րդ հատորի առաջաբանում²: Բայց ես կարծում եմ, որ այդ ելույթը պետք է ուղղված լիներ պ. Դյուլոթիին³, որն ամբաստանում էր Լանգլուային՝ Ազաթանդեղոսը ոչ թե հայերեն բնագրից, այլ իտալերենից թարգմանելու համար: Մեր մեջ ասած, կարծում եմ, որ Դյուլոթիի ամբաստանությունը անհիմն չէր:

Այստեղ մնում եմ մի քանի օր ևս: Եթե կարողանայիք առանց հապաղելու մի քանի բառ ինձ գրել թեկուզ հայտնելու, որ լուսանկարը հաջողությամբ Ստոկհոլմ է հասել, ապա Դուք կարող եք Ձեր նամակը հասցեագրել պ. պրոֆեսոր Բաուդարտներին⁴. Schänzlein près Bale.

Անշուշտ Դուք ծանոթ եք Մովսես Խորենացու վերաբերյալ բառագարտների աշխատությանը:

Ինձ հրավիրում են ճաշելու և ինձ մնում է միայն Ձեզ հղել լավագույն ողջույններս:

Ա. Կարիեր

5.

13 հոկտեմբերի 1892

Բալ

Թանկագին Պարոն

Հասնում եմ Բալ մի փոքր ուշ, որ չէի մտածում, և այնտեղ գտնում եմ Ձեր նամակն ու Ձեր հոգվածը՝ հայերեն քննական հրատարակությունների կարևորության վերաբերյալ: Ես անմիջապես ծանոթացա դրա հետ մեծագույն հաճությամբ, բայց այսօր ազատ ժամանակ չունեմ, որպեսզի Ձեզ ցույց տամ ֆրանսերենի տեսակետից կատարվելիք ուղղումները: Վաղն առավոտյան մեկնում եմ Վենետիկ, որտեղ կկարողանամ ավելի հաճությամբ աշխատել: Ձեր հոգվածը պահանջված ծանոթագրությունների հետ միասին Ձեզ կուղարկեմ մի քանի օր հետո միայն: Հարկ չեմ համարում ասել, որ դրա համար ամենամեծ հոգ կտանեմ և որ Ս. Ղազարում կլռեմ դրա մասին:

Մի քանի լուպե ունեմ միայն:

Ներեցեք, Ձեզ ալսքան կարճ գրելուս համար, այսօր ցանկացա միայն Ձեզ վստահեցնել Ձեր ձեռագրի ճակատագրի վերաբերյալ:

Հաճեցեք ընդունել, թանկագին Պարոն, զգացմունքներիս խորը հավաստիքը:

Ա. Կարիեր

Վենետիկի հասցեն՝ Albergo della Luna

6.

20 օգոստոս 1892

Պարոն

Շնորհակալություն եմ հայտնում Ձեր 16-ի բարեհամբույր նամակի համար և „Moïse de Khorène et les généalogies patriarchales“¹ գրքույկի համար, որը երեկ ստացա: Այսօր Ձեզ ուղարկեցի իմ «Հայկական բառաքնությունը»² և իմ «Քննասիրի»³ երկու պրակները: 25 տարուց ի վեր աշխատում եմ հայերեն բնագրերի բարձրագույն վրա: Մինչև օրս հրատարակված մեր բոլոր մատենագիրների բնագրերի քննական ուսումնասիրություն եմ արել... Այս լուպեիս գրում եմ „Mémoire sur l'Urgence d'une édition critique des textes arméniens“⁴ որ պ. պրոֆեսոր է. Տեզան⁵ շնորհակալությամբ ձեռնամուխ է եղել ներկայացնել «l'Académie dei Lincei»: Ահա մի հատված իմ «Mémoire»-ից, որը բավարար չափով Ձեզ կասի այս կամ այն հայագետի վերաբերյալ իմ տարբեր կարծիքների մասին. «Ես հաստատապես համոզված էի և հիմա էլ համոզված եմ, որ յուրաքանչյուր հայ հեղինակի մասին քննական ուսումնասիրություն պետք է նախորդի օտար լեզվով թարգմանությունը և դրա քննակիսն հետազոտությունը, ինչպես նաև հայերեն քերականություն ու բառարան պետք է հաջորդեն մեր բոլոր բնագրերի գիտական հրատարակությանը: Մինչև օրս արել են հակառակը: Օրինակ, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» թարգմանել են լատիներեն, ֆրանսերեն, իտա-

լերեն, ռուսերեն, գերմաներեն, ժամանակակից հայերեն՝ առանց նախօրոք ուշադրության առնելու բնագիրը, ի հանդիմանություններով, հակասություններով, գրիչների անգիտության և հրատարակիչների ոչ բավարար խորաթափանցության պատճառով արված ամեն տեսակի աղավաղումներով: Իվ, վստահելով Վիկտոր Լանգլուայի սխալներով ի թարգմանությանը, գերմանացի գիտնական Ալֆրեդ ֆոն Դուտշմիդը՝ առանց կասկածելու, նույնքան խիստ, որքան անհիմն դատողություններ է արել մեր մեծագույն պատմիչի վերաբերյալ: Նույնը կարող եմ ասել Ագաթանգեղոսի, Փավստոս Բուղանդի, Ղազար Փարպեցու, Արիստակես Լաստիվերտցու և շատ ուրիշների թարգմանությունների առնչությամբ:

Սեբեոսի հրատարակությունը՝ տպագրված Կոստանդնուպոլսում 1851 թ., ոչինչ չարժե, ինչպես մի քանի ամիս է ինչ գրել եմ այդ մասին պ. Գ. Ա. Շրումպֆին⁹, և Պատկանյանի հրատարակությունը՝ տպագրված Սանկտ Պետերբուրգում 1879 թ.¹⁰, մի բան չի ներկայացնում: Բնագրում կան բացթողումներ, տեղափոխված թերթեր և խաթարված հատվածների մի բազմություն, որոնք անհասկանալի են դարձնում մեր լավագույն պատմիչներից մեկին: ...Եթե Դուք ցանկանում եք նշել այն բառերը, որոնք Ձեզ համար անհասկանալի են մնացել, ապա ես Ձեզ կհաղորդեմ իմ ուղղումները՝ խնդրելով հիշատակել իմ անունը այն դեպքում, երբ օգտագործեք իմ ծանոթագրությունները:

Կարդացի Ձեր հոդվածը «Հանդեսում»¹¹, որին բաժանորդագրված եմ: Ինձ շատ հետաքրքրեց: Խնդրում եմ, Վենետիկի Մխիթարյանների Հայերեն մեծ բառարանի Առաջաբանում (1836 թ. հրատարակություն)¹² փնտրել «Վր՛ Անդր...» խորագիրը, Դուք այնտեղ կտեսնեք, թե ինչ են ասում Մովսես Խորենացու «Պատմության» և «Սեղբեստրոսի վարքի» համանման հատվածների մասին:

Ձեզ համար օգտակար կլինի, եթե ձեռք բերեք «Սեղբեստրոսի վարքի» հայերեն թարգմանության¹³ մի օրինակ, թող փնտրեն ձեռագրերում՝ Սոկրատի Եկեղեցական պատմության սկզբում: Իմ «Քննասերում» նշել եմ 486—490 թթ.՝ իբրև Մովսեսի «Պատմության» շարադրության հավանական ժամանակը: Կարգալուց ի վեր այն, ինչ գրել էր պ. Տաշյանը իր «Ուսումնասիրություն Ստոյն Կալիսթենեայ» աշխատության մեջ (էջ 76)¹⁴, ես այն կարծիքն ունեմ, որ հարկավոր է այդ ժամանակը ետ տանել մի տաս տարով: Հիացած եմ, որ գալիս եք հաստատելու իմ կարծիքը: Մովսեսի «Պատմության» վերաբերյալ իմ քննական ուսումնասիրությունում կա «Արամ», «Արա»-ի փոխարեն, որը հարմարվում է Ձեր ուղղման հետ (Մովսես Խորենացի, էջ 41, ծան. 1): Ինչ վերաբերում է՝ «Ձի Արայն երկոտասաներորդ է յետ Նինոսի, մանուկ տիովք վախճանեալ» հատվածին, ասյա իմ քննական ուսումնասիրությունը ունի՝ «Ձի Արայն երկոտասաներորդ է, յետ Նինոսի մանուկ տեսովք վախճանեալ» իմաստը: Բայց իմ ծանոթագրություններում ես ավելացրել իմ Ձեր ուղղումը. «յետ Նոյի»:

Հաճեցեք ընդունել, Պարոն, վսեմ հարգանքներիս արտահայտությունը:

ՆԱՐԱՅԻՐ

Իրկու փաստ ևս ունեմ՝ պնդելու համար, որ Մովսեսը իր «Պատմությունը» ստեղծել է միայն և միայն V դարի վերջին և VI դարի սկզբին:

7.

31 օգոստոս 1892

Պատճեն

Երեկ ստացա 26-ի Ձեր նամակը: Ինձ համար մեծագույն հաճույք է Ձեր հետ զրուցել մեր հին գրողների մասին, քանզի տեսնում եմ, որ մենք կատարյալ համամիտ ենք... Շոյված եմ, որ հարգանք եք տածում իմ նկատմամբ և խնդրում եմ հավատալ, որ այդ հարգանքը փոխադարձ է: Լիահույս եմ, որ Դուք ոչ միայն կկիսեք իմ կարծիքները, այլև Ձեր համոթյամբ և կորովամտությամբ ինձ կշնորհեք մի զորավոր նոր ուժ:

Իմ «Բառաքնությունը» լոկ մի փորձ էր: Ես շունեի դրամական և այլ միջոցներ, որպեսզի այնպիսի քաղաքում, ինչպիսին Կոստանդնուպոլիսն է, հրատարակելի մի ընդարձակ աշխատություն: Այժմ Դուք ծանոթ եք իմ «Նախնիքին», որի մասին խոսել եմ իմ «Քննասերում»¹: Շատ բարի: Համարձակվում եմ ասել, որ լիովին և ամբողջությամբ կբավարարվեք, երբ որ իմ «Նախնիքը» տպագրված լինի: Դա կլինի մի սովորածավալ հատոր, որտեղ մեր հեղինակների 10000-ից ավելի հատվածներ ուղղված և բացատրված կլինեն, մինչդեռ իմ «Բառաքնությունը» պարունակում է միայն 200 ուղղում: Տասներկու տարի է, ինչ խոսել եմ միայն այն սխալների մասին, որ գրիչները թույլ են տվել ընդունելով Ա-ն Ու-ի, Գ-ն Դ-ի, Մ-ն Ս-ի, Մ-ն Տ-ի, Յ-ն Յ-ի, փոխարեն և հակառակը: Այժմ այդտեղ ավելացրեք Ա-ն Ը-ի, Ա-ն Ու-ի, Ա-ն Պ-ի, Ա-ն Ռ-ի, Ա-ն Ս-ի, Բ-ն Թ-ի, Բ-ն Ռ-ի, Բ-ն Ր-ի, Բ-ն Ք-ի, Դ-ն Ղ-ի, Դ-ն Շ-ի, Ե-ն Ի-ի, Ե-ն Ու-ի, Զ-ն Լ-ի, Զ-ն Ղ-ի, Զ-ն Շ-ի, Զ-ն Չ-ի, Զ-ն Ջ-ի, Զ-ն Ջ-ի, Զ-ն Վ-ի, Ը-ն Լ-ի, Ը-ն Ր-ի, Թ-ն Ռ-ի, Թ-ն Ր-ի, Թ-ն Փ-ի, Ի-ն Խ-ի, Ի-ն Ր-ի, Լ-ն Շ-ի, Լ-ն Չ-ի, Լ-ն Վ-ի, Լ-ն Է-ի, Կ-ն Ս-ի, Ն-ն Յ-ի, Զ-ն Ն-ի, Ղ-ն Շ-ի, Ղ-ն Չ-ի, Ղ-ն Վ-ի, Ղ-ն Տ-ի, Ղ-ն Ի-ի, Մ-ն Պ-ի, Մ-ն Վ-ի, Ն-ն Ս-ի, Ն-ն Է-ի, Շ-ն Չ-ի, Շ-ն Վ-ի, Ու-ն Ռ-ի, Ու-ն Ս-ի, Ու-ն Ր-ի, Ու-ն Տ-ի, Ու-ն Ռ-ի, Պ-ն Տ-ի, Ռ-ն Է-ի, Ս-ն Տ-ի, Ր-ն Է-ի, Վ-ն Է-ի, Փ-ն Ք-ի փոխարեն և հակառակը: Ինչպես նաև գրիչների վրիպակների բաղմամբ այլ տեսակներ, ընդհուպ մինչև այն սխալները, որոնք առաջանում են վատ վերծանված հայավումներից, որ Դուք հիշատակում եք:

Այժմ Սեբեոսի մասին: Ձեր երկու ուղղումները «պարտեցան» «պատերազմեցան»-ի (էջ 29, տ. 14, Պատ. հրատ.) և «դարձուցեալ» «փախուցեալ»-ի (էջ 36, տ. 21) փոխարեն գերազանց են և համանման են իմ քննական ուսումնասիրությանը: Ես ուղղել էի «պարտեցան», որովհետև այդ բառը երկու անգամ է հանդիպում միևնույն էջում (տ. 1 և 5 ներքևից) և «դարձուցեալ» ըստ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու զուգահեռ հատվածների, ինչպես Դուք այն ինքներդ եք նշել: Էջերի կարգը, որ Դուք ուշադրության եք հանձնում, նույնպես համանման է իմ քննական ուսումնասիրությանը և, ինչպես Դուք, այնպես էլ ես մտածել էի, որ Պատկանյանը ճիշտ չի բացատրել Սեբեոսի կողմից մեջ բերված դեպքերը՝ էջ 30, տ. 1 և 2-ում ավելացնելով երեք շարաբաստիկ բառ: Ինչ վերաբերում է «որք մեռեալ էին» (էջ 34, տ. 5) «որ մեռեալ էր» ուղղելուն, ապա ինձ թվում է, որ բնագիրը այդտեղ ինձ համար ավելի հասկանալի չի դառնում, առավել ևս, Կոստանդնուպոլսի հրատարակությունը:

(էջ 59) մեզ է հրամայում մի տարբերակ. «որք մեռեալ էին, եթէ էր նախարար Պարթևաց»: Արդարեւ, այնտեղ կա կամ մի բացթողում, կամ մի խորը այլափոխում: Ըստ Սեբեոսի, որը համամիտ է մյուս արևելցի պատմիչներին, Վնդոն և Վստամը խոսրով II-ի քեռիներն էին (էջ 32, տ. 17, տե՛ս Lebeau, X, 291, ծան. 2, 293, ծան. 1), ուրեմն խոսրով II-ի մայրը Վնդոյի և Վստամի քույրն էր, և երեքն էլ պարթև զորավարի զավակներն էին, որոնց Որմիզդը սպանեց (էջ 36, տ. 15—16): Իսկ ինչպես է, որ Վնդոյի և Վստամի քույրը կոչվել է «մայր Շապհոյ» 34 էջ, տ. 4-ում: խոսրով II-ն ունեցե՞լ է արդյոք Շապհո՞ւ անունը նույնպես: Ինձ համար դա մի հուսահատեցնող հատված է և ես այն թողել եմ ինչպես որ կա: Այն, ինչ հասկացել եմ Սեբեոսի պատմությունից, սա է: Որմիզդի թագավորության ներքո կար մի պարթև (էջ 36, տ. 15) զորավար («Ասպարապետ» կամ ավելի շուտ «Ասպետ», Լր Բո, X, 291, ծան. 2). այս զորավարը ուներ երկու որդի, որոնց անուններն էին Վնդո և Վստամ, նույն տեղում, տ. 23—24, 24—29 տողերը (մի քանի բառ անընթեռնելի—Ա. Վ.) կազմում են Վահրամ Չուբինի դեմ պատերազմի մասը), և մի աղջիկ, որը դարձել էր խոսրով II-ի մայրը (էջ 32, տ. 17 և էջ 34, տ. 4, որտեղ չեմ հասկացել «մայր Շապհոյ» բառերը): Որմիզդը սպանում է պարթև զորավարին (էջ 36, տ. 15) և բանտարկում է նրա որդի Վնդոյին (էջ 30, տ. 2), մինչդեռ Վստամը փախչում է (նույն տեղում, տ. 2—3): Վրա է հասնում պարսիկների ապստամբությունը Որմիզդի դեմ, ապստամբները գրավում են այն բերդը, որտեղ բանտարկված էր Վնդոն, ազատում են նրան և կարգում ապստամբ բանակի գլուխ (էջ 32, տ. 2—3, Լր Բոն տարբեր ձևով է պատմում, X, էջ 291): Վնդոն սուրհանդակներ է ուղարկում իր եղբոր՝ Վստամի մոտ, որպեսզի շուտափույթ վերադառնա Պարսկաստան Որմիզդին դահրնկեց անելու և leu'r neveu խոսրով II-ին գահ բարձրացնելու համար (նույն տեղում, տ. 4—7) և այլն: Դուք ասում եք, որ 26—27 էջերում Սեբեոսը պատմում է խոսրով II-ի արշավանքի մասին, որը եղել է 576 թ., առանց նշելու այն վայրի անունը, որտեղ տեղի է ունեցել ճակատամարտը, մինչդեռ 34 էջում, տ. 8, նա մեզ է տալիս Մելիտինե անունը: Հիմա, ահա թե ինչպես եմ ուղղել իմ քննական ուսումնասիրության մեջ 27-րդ էջի 2-րդ տողը. «Եւ կալեալ ճանապարհ գնաց ի Մելիտի[նե]», «ի տեղի մի» փոխարեն, սա մի մշտնջենավոր շփոթություն է Մ-ի և Տ-ի միջև: (Դուք չեք կարծում, որ Hermem՝ հիշատակված Բեքլարի քրոնիկում, Լր Բո, X, էջ 137, ծան. 3, և որ Սեն-Մարտենը հայտարարում է առեղծվածային իրեն համար, Arménie, Arméniens բառի եղծումն է):

Այսօր ժամանակս չի ներում, որպեսզի Ձեզ ավելին գրեմ: Ես կանդրադառնամ Ձեր նամակին և խնդրում եմ ընդունել բարձր հարգանքներիս հավաստիքը:

ՆԱՐԱՅԻՐ

Հաճեցե՞ք ինձ ասել, արդյոք այսուհետև պե՞տք է Ձեզ գրած նամակներս հղեմ Paris, 35, rue de Lille.

Ն.

8.

22 սեպտեմբեր 1892

Պատում

Թույլ տվեք, նախքան ամսույս 10-ի Ձեր այնքան հետաքրքիր նամակին պատասխանելը անդրադառնամ օգոստոսի 26-ի Ձեր նամակին, որին անբավարար պատասխան տվեցի՝ ժամանակ չունենալու պատճառով:

«Կալան զբամբիշն և զբանուկն» «զբանակն»-ի փոխարեն Ձեր ենթադրությունը շատ հաջող է և ընդունելի (Սեր., հրատ. Պատկ., 27, տ. 18): Ես գիտեի, թե «բամբիշն» պահլավերեն «bânbôshne» էր, «a lady of rank, a matron, a queen» (Martin Haug, An Old Pahlavi-pazand Glossary, 1870, p. 96), բայց ես չգիտեի պահլավերեն «banou»: Միևնույն ժամանակ Փ. Բուդանդու, III, 21 կա. «առին... ղկանայս թագաւորի և զբամբիշն և զբանուկան» «զբանական»-ի փոխարեն, որը շփոթություն էր առաջացրել մինչև օրս: Գուցե կկարողանային առարկել, որ եթե այս վերջին «զբանական»-ը կնշանակի *les iemine du roi*, ապա ի՞նչ անել «զկանայս թագաւորին» բառերի հետ, որոնք նմանապես կան: Եթե կարողանային հաստատել, որ «բամբիշն» Սասանյան թագավորների առաջին հոմանուհու անունն էր, իսկ «բանուկ»՝ երկրորդ հոմանուհու, ապա ոչ մի առարկում չէր լինի Ձեր գեղեցիկ ուղղման վերաբերյալ. «առին... և ղկանայս թագաւորին, և զբամբիշն և զբանուկն ընդ նոսին» — «ils firent prisonnières les iemmes du roi, parmi lesquelles la *banboschine* et la *Banou*»: Ահա այսպես է, որ թուրքերն ասում են. «Պաղ Գատըն, իբինճի Գատըն» — «առաջին Գատըն, երկրորդ Գատըն» (առաջին կին, երկրորդ կին — Ա. Վ.):

Որքան ես գիտեմ, գոյություն չունի «Actes de St. Basile d'Amasia»-ի հայերեն թարգմանություն: Բայց պետք է Ձեզ տեղյակ պահեմ Կոստանդին Մեծի դարձի կապակցությամբ, որը գտնվում է Ուխտանեսում (տպ. էջմիածնի, 1871)¹. Հատված Ա, էջ 101—104: Այն Ձեզ օգտակար կլինի համեմատելու «Actes de St. Silvestre»-ի հետ: Ազգային գրադարանում գտա՞ք արդյոք հայերեն թարգմանությունը, որի մասին խոսել եմ: Ամփոփիչ ոչինչ չունեմ Ձեզ ասելու կրկնությունների մասին, որ հանդիպում են Սեբեոսում: Դուք գիտեք, թե ինչ է ասում իր Առաջաբանում Պատկանյանը ձեռագրի վերաբերյալ, որը հիմք է ծառայել Թադեոս Միհրդատյանցի հրատարակությանը²: Բաղեշում 1672 թ. Գրիգոր Երեցի կողմից զրված այդ ձեռագիրը Պատկանյանի այցի ժամանակ էջմիածնում չէր գտնվում: «Արարատի»՝ էջմիածնի գրական հանդեսի միջոցով (1891, մարտ, էջ 147—155, և նամանավանդ էջ 154, տ. 3—5)³ իմացա, որ այդ նույն ձեռագիրը ներկայումս գտնվում է էջմիածնի գրադարանում: Հարկավոր կլինեն տեսնել այդ ձեռագիրը և այն ուղադրությամբ քննել, քանի որ Թադեոսի հրատարակությունը կատարյալ պակասավոր աշխատություն է, որին Պատկանյանը ստիպված է եղել հետևելու՝ ավելի լավը չունենալով: Լավ կլինեն, եթե ցուցաբերվեր ավելի մեծ խորաթափանցու-

թյուն: Դուք ունե՞ք «Սիմէօն վարդապետի Ապարանցույ Վիպասանութիւն սակս Պաշլաւունեացն դարմի և Մամիկոնեանցն սեռի» (էջմիածին, 1870) աշխատութիւնը: Այն Ձեզ կօդնի վերականգնելու Սեբեոսի որոշ հատվածներ: Միևնույն ժամանակ Դուք հաջողութեամբ կքննեք Ուխտանեսի երկրորդ մասը (հատված Բ), որի մասին վերևում խոսեցի:

Վերադառնում եմ 10-ի Ձեր նամակին: Ձեր ձեռագիրը ինձ անչափ հետաքրքրեց և անհամբերութեամբ սպասում եմ այն օրինակին, որ ցանկութիւն ունեք ինձ ուղարկելու: Ես չունեմ ոչ «l'Histoire de Grégoire de Tours»⁵, ոչ էլ «la Chronique de Bictar»: Ձեր Սեբեոսից հետո ինչ որ տպագրելու եք այս երկու աշխատութիւնների վերաբերյալ, ինձ համար շատ օգտակար կլինի: Ես չգիտեի «մաշկապերճան» բառի պաշլավերեն ծագումը, Դուք շատ բարձրացական կլինեք, եթե այն վերածեք լատիներեն տառերի, քանի որ ոչ եբրայերեն գիտեմ, ոչ էլ պաշլավերեն: Դուք գիտե՞ք, որ ըստ իս Ագաթանգեղոսի և Փ. Բուզանդի թարգմանված են ասորերենից և Կորյունի կողմից, ինչը ցանկանում եմ մի օր ապացուցել մի հատուկ ուսումնասիրության մեջ: Գիտեմ, որ maskno ասորերեն նշանակում է tente (մրան, տե՛ս Payne Smith, Thesaurus Syriacus պրակ 1-ին, 116, պրակ 2-րդ, 498, պրակ 6-րդ, 180 և այլն)⁶, բայց «մաշկապերճան»-ը հայտնաբերելու համար իմ բոլոր պրպտումները, Payne Smith-ի 7 պրակներում, անօգուտ եղան: Սպասում եմ 3 պրակներին, որոնք կգան հաստատելու այդ նկատողութիւնը: Պ. Հյուբշմանի գյուտի մասին ինձ տեղեկութիւն տալու համար շնորհակալութիւն եմ հայտնում:

Այո, «Եւ զգարս աշխարհին հայոց (էջ 36, տ. 24)» բառերը կազմում են «ըստ դրաւից իւրեանց» (էջ 34, տ. 3) բառերի շարունակութիւնը: Բայց ես երկու կտորների ծայրը ծայրին չեմ միացրել, որովհետեւ, իմ կարծիքով, մի կարևոր բացթողում կա և Դուք չպետք է զարմանաք 37 էջում «Մուշեղ» անվան հանկարծակի հայտնվելու վրա: Ես կարող եմ միայն խորապես ամստալ Սեբեոսի բնագրի աղավաղումների համար, որին համարում եմ ամենահետաքրքիրը մեր պատմիչներից: Թովմա Արծրունին, Ուխտանեսը, Ստեփանոս Ասողիկը ունեն բազում լուսաբանութիւններ, որոնք այնտեղ այլևս չենք գտնում: Ինչպիսի անդամանելի կորուստ:

«Լաստեցին» (էջ 31, տ. 19) և «Լաստեցան» (էջ 80, տ. 31) լավ ընթերցված են: «Լաստել զերկիր» կամ «լաստիլ» նշանակում է «մի երկիր գրավել (occuper un pays): Ահա ալոսպիս է, որ մենք կարդում ենք *Commentaire sur l'Evangile de St. Jean par Chrysostôme* (Ոսկեր., Մեկնութիւն թղթոյն Պաւղոսի. Վենետիկ, 1862, հատ. Բ, 591)»-ում. «Որոյ Աւետարանն իսկ զաշխարհս ամենայն լաստեաց», այսինքն. «Dont l'Evangile remplit toute la terre»: Դուք գիտե՞ք, արդյոք, Վ. Լանդլուայի Collection-ի 2-րդ հատորի ատաղաբանում նրա ելույթը («attaques brutales, libelles, perfides et mensongers» etc.) դեմ է եղ. Դիւլարիին: Ե՞րբ են հրատարակելու «Recueil des Historiens des Croisades, Documents Arméniens»-ի երկրորդ հատորը:

Թույլ տվե՛ք Ձեր տաղտութիւնը հրաժիւրել հ. Դարբելի մի հատվածի վրա, որը գտնվում է, կարծում եմ, 79 էջում. «et avoient este tuez les gens d'Armenye qu'il avoit amenez avecques luy»: Եվ հրատարակողը ծանոթագրութիւն միջ ասում է. «Դուք ձեռագրում ալստեղ մի սխալ կա» և այլն:

Ժրոք, որ դա մի տեսակի սխալ է „les gens d'Armenye“, „les gens d'armes“-ի փոխարեն, համեմատել է պետք Դարդելի բնագրի 73, 75 և 77 էջերը միայն:

Պարոն, հաճեցեք ընդունել հարգանքներիս հավաստիքը:

9.

1 հոկտեմբեր 1892

Պարոն

Հենց նոր ստացա սեպտեմբերի 28-ի Ձեր նամակը, ինչպես նաև Ձեր ձեռագրի լուսանկարը: Շնորհակալություն եմ հայտնում Ձեր հարգանքի համար, բայց ես դժվարանում եմ Ձեզ հայտնելու իմ կարծիքը, քանի որ այստեղ ոչ մի հայերեն ձեռագիր չունեմ: Ինձ թվում է, որ սա ոչ «երկաթագիր» գրություն է, ոչ էլ «միջին երկաթագիր», սա գուցե մեր «բոլորագրի» մի արխիվ ձևն է: Այն, ինչը ինձ հանկարծակի բերեց, գա բացականչական նշանն էր (:), որը ամեն տողում հանդիպում է և որը բոլորովին տարբեր է վերջակետից (:), որից օգտվում է զրոգր: Ո՞ր ժամանակաշրջանից են սկսել ձեռագրերում օգտվել բացականչական նշանից: Աղատ ժամին ես կուսումնասիրեմ Ձեր արժեքավոր փաստաթուղթը, և Ձեզ մասնակից չեմ դարձնի իմ դատողություններին այնքան ժամանակ, մինչև որ հասնեմ մի ինչ-որ արդյունքի:

Համարձակություն ունեցա, հանձնարարական ծրագրով, Ձեզ ուղարկել իմ „Memolre“-ը, որը հատկացված է Academie del Lincei-ին: Կիսնդրևի Ձեզ կարգալ և ուղղել այն ոճական թերությունները, որոնք կնկատվեն: Բարի եղեք, որքան հնարավոր է շուտ ինձ ուղարկել այն հանձնարարականով: Թույլ տվեք Ձեր ուղադրությունը հրավիրել հետևյալ հատվածների վրա.

Էջ 1, տ. 1—2, ներքևից „Il y a à cela deux grandes raisons“: Դրելու այս ձևը Դուք ընդունում եք:

Էջ 2, տ. 2—3 „et qui représentent“ թի՞ „représente“:

Էջ 8, տ. 6 „sont tout à fait nuisibles“. սա իմ մտածելակերպին մոտ է, բայց կուղենայի ավելի հաշոդ:

Էջ 10, տ. 10—11 „que je me suis créés grâce à mon Kennacèr“: Նույն տեղը, տ. 14, „accès à (թի՞ dans) toutes“...

Էջ 11. „Me permettez-vous de parler de vous“.

Էջ 11 վերջին տ. „auquel je travaille“, և էջ 12, տ. 2—3 „Mon travail“: Ես կցանկանայի թողնել առաջինը և խուսափել «աշխատանք» բառի կրկնությունից երկրորդի համար:

Էջ 13, տ. 1—2 „Je me consolerais au moins dans la pensée“:

Էջ 19, տ. 2 „Il paraît (թի՞ paraît être)“: Նույն տեղը, տ. 3 ներքևից, „dit (թի՞ il dit) en note“:

Էջ 22 „Ainsi se trouve justifiée (թի՞ confirmée)“:

Էջ 26, տ. 4 „le passage précité“:

Էջ 29, տ. 9—10 „ne nous est pas (թի՞ point) parvenue“:

Էջ 30, տ. 3—4 „ses interprètes et (ses?) commentateurs“:

էջ 34, տ. 14 „*était une autre ville (թե՞ est)*“, *ինչպիսի ասում եմ Յէ-էջում տ. 3 „n'est autre chose“*:

էջ 39, տ. 3 „*appellent Pythagore (թե՞ ont appelé)*“. *Նույն տեղը՝ վերջին տողը, „Mnesarchi (թե՞ Mnesarchae)“*:

Խնդրում եմ, Պարոն, ընդունել հարգանքներիս հավաստիքը՝ նախօրոք՝ շնորհակալանքներիս հետ միասին:

Պ. պրոֆ. Բաումգարտներին ճանաչում եմ նրա համբավով: Ափսոսում եմ, որ դերմաներեն չգիտեմ: Գիտեմ, որ նա հրատարակել է մի գիտական ուսումնասիրություն «Chries»-ի գրքի վերաբերյալ, դժբախտաբար չկարողացա նրանից օգտվել: Հաճեցեք նրան հաղորդել իմ հարգալիր մաղթանքները:

10.

29 հոկտեմբերի 1892

Սիրելիդ իմ պրոֆեսոր

Albergo de la Luna Venice

Ստացա ամսույս 13-ի նամակը, որ ինձ եք հասցեագրել Բալից: Դուք շատ բարյացակամ դտնվեցիք առաջարկելով ինձ Ձեր թանկագին աջակցությունը՝ վերանայելու համար իմ աշխատությունը ֆրանսերենի տեսանկյունից: և ի սրտե շնորհակալություն եմ հայտնում: Մի քանի օր է անցել ինչ պարոն Տեղան ինձ հարցրեց, թե արդյոք իմ աշխատությունն ավարտված չէ: Հուսով եմ այն շուտով ստանալ, որպեսզի անհապաղ Պաղու ուղարկեմ:

Ես կսպասեմ Ձեր վերադարձին Փարիզ, որպեսզի հաղորդեմ իմ «Հայկական բառաքնություն» մեջ կատարված մի քանի վերափոխություններ, քանզի փափագում եմ, որ այն արժանի լինի Ձեր վստահությանը:

Հաճեցեք ընդունել, թանկագին պրոֆեսոր, հարգանքիս հավաստիքը:

Հ. Գ. Իմ աշխատության մեջ ես սկզբում գրել էի „sans avoir préalablement fixé l'original, qui est *farcé* de non-sens“ (*Առանց նախապես ճշտած լինելու բնագիրը, որը խճողված է անիմաստություններով*—Ա. Վ.) և այլն: Ես ընդունում էի այդ բառը, որովհետև կարծում էի, որ այն ազդու է: Բայց մի ֆրանսիացի տիկին, որը Ստոկհոլմում ֆրանսերեն է դասավանդում, հորդորեց ինձ այն փոխարինել «*surchargé*»-ով (ծանրաբեռնված—Ա. Վ.), ասելով, թե «*farcé*» բառը զվարճախոսություն է և վայել չէ օգտագործել լուրջ աշխատության մեջ: Անցյալ օրը կարդում էի Ֆ. Լընորմանի¹ և է. Բաբելոնի² «Արեւելքի հին պատմության» V հատորը³, էջ 150 և այնտեղ գտա հետևյալ նախադասությունը. «des récits *farcis* d'interpolations qui en ruinent la valeur historique» (խարդախված բնագրերով խճողված պատմություններ, որոնք աղճատում են պատմական արժեքը—Ա. Վ.): Միևնույն ժամանակ Բոսյունեն, որը լուրջ մարդ էր, հրքեմն իր «նամակներում» գրել է. «Ses critiques sont *farcies* d'erreurs» (իր քննադատականները խճողված են սխալներով—Ա. Վ.), (Կիտրե⁴—Farcé բառը): Եթե Դուք համամիտ չեք ֆրանսիացի տիկնոջ հետ, ապա ուրախ կլինեմ վերականգնված տեսնել *farcé* բառը:

ԾԱՆՈԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

1. Սկառի ունի «Հանդես ամսօրյա» պարբերականը:
2. Ա. Կարիեր, Մովսես Խորենացու մի նոր աղբյուրը, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1892, № 8, էջ 251—253:
3. Տաշյան Հակոբոս (1866—1933)—Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, անվանի հայագետ, բաղմաթիվ մենագրությունների և հոդվածների հեղինակ:
4. Carrière Antoine, Moïse de Khorène et les généalogies patriarchales, Paris, 1891.

2.

1. «Պատմություն Սեբեոսի Եպիսկոպոսի ի Հերակլին ի լույս ած Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1879: Նամակներում Սեբեոսից արված մեջբերումները կատարված են այս հրատարակությունից:
2. Նոյման Կարլ Ֆրիդրիխ (1793—1870)—գերմանացի պատմաբան, արևելագետ, հայագետ, ուսանել է Մխիթարյանների մոտ, ճանապարհորդել է Զինաստանում, որտեղից Մյունխեն է բերել 12000 գրքից բաղկացած մի գրադարան: Մյունխենի համալսարանի պրոֆեսոր, բաղմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ, որոնցից են. «Mémoire sur la vie et les ouvrages de David, philosophe arménien du Ve siècle de notre ère», Paris, 1825. «Eznik Koghbetzi», Leipzig, 1834. «Versuch einer Geschichte der armenischen Literatur nach den Werken der Mechitaristen», Leipzig, 1836 և այլն: Թարգմանություններ է կատարել մի շարք հայ մատենագիրներից:
3. Norayr de Byzance—De l'urgence d'une édition critique des textes arméniens—Rome, Tip. Accad. 1892.
4. Le Beau Charles (1701—1778)—ֆրանսիացի ճարտասան և պատմաբան, ակադեմիայի անդամ: Գրել է «Histoire du Bas-Empire, 27 հատորով: Նրա լատիներեն աշխատությունները տպագրվել են հետևյալ վերնագրով՝ «Carmina, adjectis quibusdam aliis» Paris, 1782—1783, 3 հատոր):
5. «История императора Иракла, Сочинение епископа Себеоса, писателя VII века», предисловие и перевод К. Патканова, СПб., 1862.
6. Պարոնյան Սուրիան (1831—1903)—հայագետ, մանկավարժ, պաշտոնավարել է Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան դպրոցում, 1880—1890-ական թթ. ղեկավարել է Մանչեստրի հայկական գաղութը: Հրատարակել է Քաղկեդոնի ժողովի, Մեսրոպյան նշանագրերի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու վերաբերյալ ուսումնասիրություններ:
7. Սոկրատ Սրուստիկոսի Եկեղեցական պատմություն, Թարգմանեաց Փիլոն Տիրակացի, աշխատասիրութեամբ Մ. Տեր-Մովսիսյան, Վաղարշապատ, 1897:

3.

1. Սեն-Մարտեն Անտուան-Ժան (1791—1832)—ֆրանսիացի նշանավոր արևելագետ: Արաքերենի, պարսկերենի, թուրքերենի, հայերենի գիտակ: 1810 թ. Ակադեմիայի անդամ: Ասիական ընկերության հիմնադիր-անդամ (1822): Ունի հետևյալ կարևոր աշխատությունները: «Mémoires sur l'histoire et la géographie de l'Arménie» (1818—1819, 2 հատ.), «Nouvelles recherches sur l'époque de la mort d'Alexandre et sur la chronologie des Ptolémées (1820), «Fragment d'une histoire des Arsacides» (1830, 2 հատ.), գրել է և՛ Ռոյի «l'Histoire du Bas-Empire»-ի առաջին 13 հատորների ծանոթագրություններ:

2. Գրեգուար դ'Տուր (539—595) — ֆրանսիացի պատմիչ և աստվածաբան, Կարևոր աշխատություններն են. „Histoire ecclésiastique des Francs“ և „De Gloria Martyrum“, „Les Vies des Pères“.

3. «Պատմութիւն տաւն Արծրունեաց, ի Քումայ վ. Արծրունոյ», Կ. Պոլիս, 1852 — ՌՅԱ:

4.

1. «Սիմէօն վարդապետի Ապարանցոյ Վիպասանութիւն սակս Պաշտօնեացն դարմի և Մամիկոնեացն սեռի», Վաղարշապատ, 1870:

2. Վիկտոր Լանգլուա (1829—1869) — ֆրանսիացի արևելագետ, ծնվել է Դիեպոմ: Ճանապարհորդել է Կիլիկիայում և Հայաստանում: Իտալիայում ի մի է բերում իր հավաքածուները՝ որոնք վերաբերում են հայ-ֆրանսիական կապերին՝ իաշակիրների արշավանքների ժամանակ: Նրա կարևոր աշխատություններից են՝ „Notice sur le couvent arménien de l'île Saint-Lazare, a Venise, et sur la congrégation mékhitariste, avec un aperçu sur l'histoire et la littérature de l'Arménie“ (1862), „Numismatique des nomes d'Egypte sous l'administration romaine“ (1852), „Numismatique de la Géorgie au moyen age“ (1852): Նամակագիրը նկատի ունի՝ „Collection des historiens anciens et modernes de l'Arménie“ (Paris, 1867—1869) աշխատությունը:

3. Դյուլորիե ժան Պոլ Լուի Ֆրանսուա էդուարդ (1807—1881) — ֆրանսիացի արևելագետ-հայագետ-գրականագետ-պատմաբան: Արևելքի կենդանի լեզուների Փարիզի դպրոցի հայերենի պրոֆեսոր: Ակադեմիայի անդամ, Ասիական ընկերության անդամ: Կարևոր աշխատություններից են՝ „Récit de la première croisade, extrait de la chronique de Matthieu d'Edesse et traduit de l'Arménien“ (1850), „Histoire, dogmes, traditions et liturgie de l'Eglise arménienne orientale“ (1859): Նամակագիրը նկատի ունի՝ „Recueil des Historiens des Croisades“, Publié par les soins de l'Académie des Inscriptions et de Belles-Lettres. T. I: Documents arméniens, T. II: Documents latins et français relatifs de l'Arménie (en français, en arménien). Paris. Imp. Impériale, T. I, 1869, T. II, 1906.

4. Բաումգարտներ Միքայել (1812—?) — գերմանացի աստվածաբան, արևելյան լեզուների գիտակ: Ունի բազմաթիվ աշխատություններ, որոնցից են. „Theolog, Commentar zum Alten Testament“-ը (1843—44), „Apostelgeschichte oder Entwicklungsgang der Kirche von Jerusalem bis Rom“ (1852): Ակնարկված աշխատությունն է. Dr. Lauer und das zweite Buch des Moses Chorenatzi, Leipzig. 1885.

6.

1. Տես № 1 նամակի № 4 ծանոթագրությունը:

2. Նորայր Բյուզանդացի, Հայկական բառաքնություն, ուղղութիւն ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց և նշանակութիւն բառից ինչ, Կ. Պոլիս, 1880:

3. Նորայր Բյուզանդացի, Քննասեր (վիմագիր), Ստոկհոլմ, 1887, պրակ Ա, Բ:

4. Հրատարակվել է Հոռմում 1892 թ.:

5. էմիլիո Տեդա (1831—1912) — Իտալացի արևելագետ, հայագետ: Պադուայի համալսարանի պրոֆեսոր: Նրա աշխատություններից են. „Il libro dei setti savi nella letteratura armena“, Venezia, 1905. „Cose Armene“ (Venezia, 1900). „Una lettera di Giovanni Mandacuniese—Atti e Memorie della R. Academia di scienze, lettere ed arti di Padova 1889—90“, „Dell'Essamero di Giorgio Plside, secondo la antica versione armena 1893“, „Հելլեն իմաստասիրաց հատընտիր բարոյական առածք թարգմանեալք ի հայոց“, 1893:

6. Moïse de Khorèn, Histoire d'Arménie en trois livres. Traduction nouvelle accompagnée de notes historiques, critiques et philologiques par V. Langlois, [In: Collection des Historiens de l'Arménie.] Paris, 1867—69.

7. Gutschmid A., Über die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren. Leipzig. KGW., 1876, In—8, 43 p. և Klein Schriften. III. Moses von Khoren. Leipzig. B. Teubner, 1889—1894, 5 vol. In—8.

8. «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլէն», Կանխաբանութիւն Թադեոս Միհրդատ .ա. Աստվածատրյան Միհրդատեանց, Կ. Պոլիս, 1851:

9. Գոստավ Ադոլֆ Շրումպֆ (1844—1892) — ֆրանսիացի հայագետ, հոգվածներ է գրել .եվրոպացի և ռուս հայագետների մասին:

10. Տե՛ս № 2 նամակի № 1 ծանոթագրութիւնը:

11. Ա. Կարիեր, Մովսէս Խորենացու մեկ նոր աղբյուրը. «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1892, № 8, էջ 251—253:

12. Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմելյան և Մ. Ավգերյան, նոր բողոքիչ հայկազեան լեզուի, հատ. 1—2, Վենետիկ, 1836—1837:

13. «Պատմութիւն վարուց սրբոյն Սեդրեստրոսի եպիսկոպոսին», Թարգմանեալ Աբասուն Գրիգորի Զորափորեցոյ, Վաղարշապատ, 1897:

14. Հ. Տաշյան, Ստոյն Կալիսթենեսայ (Pseudo-Callisthenes) վարուց Աղեքսանդրի, ուսումնասիրութիւնը, Թարգմանութեան ներքին արժեքը և լեզուն, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1891, № 1, էջ 5—11, № 2, էջ 33—37, № 4, էջ 101—105, № 5, էջ 147—149, № 9, էջ 257—260, № 12, էջ 357—362: Առանձին գրքով. «Ուսումնասիրութիւնը Ստոյն Կալիսթենեսայ վարուց Աղեքսանդրի», Վիեննա, 1892:

15. Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնը, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1865:

7.

1. Տե՛ս № 6 նամակի № 3 ծանոթագրութիւնը. ամբողջութեամբ չի տպագրվել: Զեռագրի միկրոֆիլմը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

8.

1. Ուստանես եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, 1871, Վաղարշապատ:

2. Հայերեն հրատարակվել է Վիեննայում 1892 թ.՝ «Վարք Աղեքսանդրի» խորագրով:

3. Տե՛ս № 6 նամակի № 8 ծանոթագրութիւնը:

4. Գալուստ Տեր-Մկրտչյան (Միսրան) — Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն, «Արարատ», էջմիածին, 1890, № 10, էջ 567—576, № 2, էջ 674—682, № 2, էջ 87—106, № 3, էջ 147—155:

5. Տե՛ս № 3 նամակի № 2 ծանոթագրութիւնը:

6. Պեյն Սմիթ Ռոբերտ (1818—1895) — Սքոֆորդի համալսարանի պրոֆեսոր, անգլիացի արևելագետ, արևելյան մի շարք լեզուների գիտակ, գրել է բաղմամբով աշխատութիւններ, առաջինը կարևոր է նրա «Thesaurus Syriacus» (Օքսֆորդ, 1860—1895) բաղմահատոր հետազոտութիւնը:

7. Dardel J. — Chronique d'Arménie, Texte établi sous la direction du Comte Riant avec la collaboration d'U. Robert. [In. Dulaurier—Recueil des Historiens des Croisades, T. II] Paris, Imp. Nationale, 1869 et 1906. In—fol. Նույնը հայերեն՝ Դարդել Հովհաննես, Ժամանակագրութիւն հայոց, Թարգմանութիւն Խորեն Նարայեյի, առաջաբան Կ. Նզյանի, Ս. Պետերբուրգ. 1891:

10.

1. Լընորման Ֆրանսուա (1837—1883) — Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, նշանավոր արևելագետ, հայագետ: Կարևոր աշխատութիւններից են. «Sur l'éthnographie et l'histoire de l'Arménie avant les Achéménides», Paris, 1871—1879. 3 vol., «La légende de Sémiramis», Bruxelles, Hayez, 1883, «Les origines de l'histoire d'après la Bible et les traditions des peuples orientaux», Paris, 1880—1882. 3 vol. և այլն:

2. Բարեյոն Էրնեստ-Շառլ-Ֆրանսուա (1854—1924) — ֆրանսիացի արևելագետ-դրամագետ: Նրա երկասիրութիւններից են. «Catalogue des monnaies grecques de la Bibliothèque Nationale. Les rois de Syrie, d'Arménie et de Commagène», Paris, 1890, «Manuel of Oriental antiquities», New York, 1906, «Description historique et chronologique des monnaies de république romaine», 1885.

3. Խոսքը լքնորմանի և Բաբելոնի հետևյալ 6 հատորանոց աշխատության մասին է— „Histoire Ancienne de l'Orient“, Paris, 1881—1888.

4. Լիտրե էմիլ (1801—1881)— ֆրանսիացի լեզվաբան, բառարանագիր: Նամակագիրը նկատի ունի նրա „Dictionnaire de la langue française“ (1863—1873) մեծածեղ բառարանը:

ИЗ ПЕРЕПИСКИ АНТУАНА КАРЬЕРА И НОРАИРА БЮЗАНДАЦИ

(Резюме)

Французский востоковед Антуан Каррьер (1838—1902) переписывался с видными армянскими учеными из конгрегации Мхитаристов и Лазаревского института. Его переписка с известным филологом-арменоведом Норайром Бюзандаци (1845—1915) посвящена важным проблемам древнеармянской филологии. Многие вопросы, обсуждаемые в их письмах, впоследствии были разрешены и представляют интерес для истории арменоведения.

Французские оригиналы публикуемых писем хранятся в Матенадаране им. Маштоца (ф. 70, папка № 235, док. 201—205, папка № 235 б, док. 246—250).

А. В. ВАРДАНЯН.